ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ն. Պողոսյանի (լիազորագիր, տրված՝ 26.05.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Գ. Հուրոյանի (լիազորագիր, տրված՝ 24.05.2019թ.)

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված և 22.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/30 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Լիլանարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Լիլանարմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են «7» չափաբաժիններում:

Ընթացակարգին ի թիվս մնացած կազմակերպությունների մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Լիլանարմ» ՍՊԸ կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. տեղի ունեցած նիստում կայացվել է որոշում «Լիլանարմ» ՍՊԸ-ին 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչելու վերաբերյալ:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1 կետի 1.3 ենթակետով արձանագրվել է, որ կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը, և կայացվել է որոշում ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը.

Ընկերության հայտը մերժվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N1 հավելվածով

հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 44-րդ կետի պահանջները, այն է՝ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մանակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվույթան ներկայացվելու հանգամանքից:

Ընկերությունը տրամադրել է տեղեկատվություն, համաձայն որի 07.05.2019թ. թիվ 000954 վճարման հանձնարարականով՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջոցով մինչև Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելը, իրականացրել է իր հարկային պարտավորության կատարումը: Հայտը ներկայացվել է 22:53՝ համոզվելուց հետո, որ վճարումը կատարվել է և գումարը հաշվից ելքագրվել է: Տեխնիկական պատճառներվ ՊԵԿ բազայում պարտքի մարումը տեղի է ունեցել հաջորդ օրը՝ 08.05.2019թ.:

Համաձայն կարգի 67-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելուվ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Համապատասխան հարցման գրավոր եզրակացության դեպքում ակնհայտ կլիներ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում 07.05.2019թ.՝ հայտը ներկայացնելու օրը, կատարել է իր հարկային պարտավորության վճարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ վերջինս չի ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ուստի տվյալ հիմքով հայտը ենթակա չէ մերժման:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.05.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով ընկերության հայտը մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.05.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով 1-ին չափաբաժնի մասով «Ագարակ» ԲԲԸ-ին, 4-րդ չափաբաժնի մասով «Օրիոն-7» ՍՊԸ-ին մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ ընկերության հայտը բավարար գնահատելու վերաբերյալ:

«Լիլանարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սահմանված կարգով ներկայացրել է բողոքի քննության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ՝ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 07.05.2019թ. հայտ է ներկայացրել «Լիլանարմ» ՍՊԸ-ն:

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լիլանարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2 196 664 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լիլանարմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի *07.05.2019թ. թիվ 000954 և 000955* վճարման հանձնարարագրերի անդորրագրերի համաձայն՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. «900008000490» և «900005001186» գանձապետական հաշվեհամարներին իրականացվել են համապատասխանաբար *2 200 000 ՀՀ դրամի և 1 000 ՀՀ դրամի գումարի վճարումներ:*

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Պատվիրատուի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի մասնակցելու նպատակով 07.05.2019թ. ժամը 22:53-ին հայտ ներկայացրած «Լիլանարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լիլանարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2 196 664 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լիլանարմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի 07.05.2019թ. թիվ 000954 և 000955 վճարման հանձնարարագրերի անդորրագրերը, որոնց համաձայն՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից

07.05.2019թ. ժամը 17:31-ին «900008000490» և «900005001186» գանձապետական հաշվեհամարներին իրականացվել են համապատասխանաբար 2 200 000 ՀՀ դրամի և 1 000 ՀՀ դրամի գումարի վճարումներ:

Ընկերությունը ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 2 բաժնի կողմից 17.05.2019թ. տրված թիվ 874 տեղեկանքը առ այն, որ 07.05.2019թ. դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 2 195 663 ՀՀ դրամի պարտավորություն՝ շահութահարկի գծով և 1000 ՀՀ դրամի պարտավորություն՝ դրոշմանիշային վճարի գծով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտը ներկայացնելու նույն օրը՝ 07.05.2019թ. կատարվել են հարկային պարտավորությունները և հարկերի միասնական հաշվին, ինչպես նաև պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվեհամարին վճարվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորության չափը (2 196 664 ՀՀ դրամ) գերազանցող չափի վճարում:

ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Նույն օրենսգրքի 46-դ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոհիշյալը, գտնում եմ, որ «Լիլանարմ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լիլանարմ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Լիլանարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 1-ին չափաբաժնի մասով «Ագարակ» ԲԲԸ-ին և 4-րդ չափաբաժնի մասով «Օրիոն-7» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

3. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Լիլանարմ» ՍՊԸ-ի հայտը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**